

Հաստատված է  
ԵՊՀ գիտական խորհրդի  
2017 թ. մարտի 30-ի թիվ 6 նիստում

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ  
Ա. Հ. Սիմոնյան

**ԱՇԽԱՏԱԿԱՐԳ**  
**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ**  
**ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ) գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) իր գործունեությունն իրականացնում է ԵՊՀ կանոնադրությանը, ԵՊՀ ներքին իրավական ակտերին և սույն աշխատակարգին համապատասխան:

2. Հանձնաժողովի գործունեության նպատակն է իր կանոնակարգման ոլորտին վերաբերող հարցերի ուսումնասիրումը, նախապատրաստումը և դրանց վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդին եզրակացությունների ներկայացումը:

3. Հանձնաժողովն իր կանոնակարգման ոլորտին վերաբերող գործընթացներն իրականացնում է ԵՊՀ որակի ապահովման հայեցակարգին համապատասխան՝ իր նախաձեռնությամբ, ԵՊՀ գիտական խորհրդի և (կամ) ռեկտորի հանձնարարությամբ:

4. Հանձնաժողովի գործունեության ժամկետը հինգ տարի է: Հանձնաժողովը բաղկացած է յոթ անդամից, որոնցից մեկը ԵՊՀ ուսանող է: Հանձնաժողովի անվանական կազմը հաստատում կամ դրանում փոփոխություններ է կատարում ԵՊՀ գիտական խորհուրդը:

**II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

5. Հանձնաժողովի խնդիրներն են.

1) ԵՊՀ որակի ներքին ապահովման իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրումը և դրանց հաստատման համար ԵՊՀ գիտական խորհրդին եզրակացությունների ներկայացումը:

2) ԵՊՀ նոր կամ վերանայված կրթական ծրագրերի նախագծերի վերաբերյալ փորձագիտական եզրակացությունների ուսումնասիրումը և ծրագրերի հաստատման համար ԵՊՀ գիտական խորհրդին եզրակացությունների ներկայացումը:

3) ԵՊՀ կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և սույն աշխատակարգով իրեն վերապահված այլ լիազորությունների իրականացումը:

### **III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

6. Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության: Հանձնաժողովի առաջին նիստը հրավիրում է ռեկտորը, որի ընթացքում ընտրվում է հանձնաժողովի նախագահ: Հանձնաժողովի հաջորդ նիստերը հրավիրում է հանձնաժողովի նախագահը:

7. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների երկու երրորդը: Հանձնաժողովում որոշումներն ընդունվում են հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահն ունի վճռորոշ ձայնի իրավունք:

8. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նիստը վարում է նրա կողմից նշանակված հանձնաժողովի անդամը:

9. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են հանձնաժողովի նախագահի կողմից առաջարկվող օրակարգով և արձանագրվում են:

### **IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ**

10. Հանձնաժողովի նախագահը՝

1) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը,

2) համակարգում է հանձնաժողովի որոշումների ընդունման գործընթացը,

3) առանձին հարցերի քննարկման նպատակով հրավիրում է համապատասխան մասնագետների և փորձագետների,

4) ԵՊՀ գիտական խորհրդում ներկայացնում է հանձնաժողովի կողմից քննարկված նախագծերը,

5) իրականացնում է ԵՊՀ ներքին իրավական ակտերով և սույն աշխատակարգով նախատեսված այլ լիազորություններ:

## **V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ**

11. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովում բարձրացված հարցերի վերաբերյալ քննարկումներին,

2) հանձնաժողովում անցկացված քննարկումների հիման վրա քվեարկության միջոցով մասնակցում է որոշումների ընդունմանը,

3) հանձնաժողովի որոշմամբ ԵՊՀ գիտական խորհրդում ներկայացնում է հանձնաժողովի կողմից քննարկված նախագծերը,

4) իրականացնում է ԵՊՀ ներքին իրավական ակտերով և սույն աշխատակարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:

12. Հանձնաժողովում քննարկված հարցերի վերաբերյալ հանձնաժողովի անդամը կարող է ունենալ հատուկ կարծիք և այն ներկայացնել ԵՊՀ գիտական խորհրդի նիստում: